**Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր**

**27-3-22.4-Մ2-15 Գլխավոր իրավաբան(2024-04-11 )**

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր**

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն | Օտարերկրացիների իրավական կարգավիճակի որոշման վարչություն | Օտարերկրացիների բնակության օրինականության որոշման և վերադարձման բաժին | Գլխավոր իրավաբան, (27-3-22.4-Մ2-15)

**1.2 Ենթակա և հաշվետու է**

Գլխավոր իրավաբանն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

**1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Գլխավոր իրավաբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր իրավաբանը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

**1.4 Աշխատավայր**

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն 4-րդ թաղ., 17/10 շենք:

---

**2. Պաշտոնի բնութագիր**

**2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները**

1. իրականացնում է Ծառայության կողմից իրականացվող վարույթների արդյունքում, ինչպես նաև այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության միջոցով ՀՀ-ում անօրինական գտնվող օտարերկրյա քաղաքացիներին հայտնաբերելու, նշված կատեգորիայի անձանց հաշվառելու, նրանց կամավոր վերադարձի ու արտաքսման համար պահանջվող ընթացակարգերը.
2. իրականացնում է ռեադմիսիոն համաձայնագրերով նախատեսված՝ օտարերկրյա քաղաքացիների վերադարձման գործառույթները.
3. ՀՀ-ում անօրինական գտնվող օտարերկրացիների նկատմամբ իրականացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթներ, կայացնում որոշումներ:

**Իրավունքները.**

- ՀՀ տարածքում անօրինական գտնվող օտարերկրացու նկատմամբ վարչական իրավախախտման գործով վարույթի իրականացման գործընթացում, ինչ անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր և նյութեր.
- Ծառայության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից, կառուցվածքային ստորաբաժանման այլ բաժիններից և Ծառայությանը ենթակա կազմակերպություններից, ՀՀ պետական մարմիններից, անհրաժեշտության դեպքում նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստանալ վարույթի իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր.
- մասնակցել պետական մարմինների, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին և քննարկումներին, անօրինական գտնվող օտարերկրացիների նկատմամբ օրենքով նախատեսված հարկադրանք կիրառելու թեմաներով սեմինարներին և գիտաժողովներին:

**Պարտականությունները.**

- փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերել ՀՀ տարածքում անօրինական գտնվող օտարերկրացիներին և կատարել նրանց հաշվառման աշխատանքները, վիճակագրություն ապահովելու նպատակով գրանցել անհատական տվյալները.
- ուսումնասիրությունների արդյունքում բացառել վարչական պատասխանատվության, արտաքսման, ռեադմիսիայի կամ կամավոր վերադարձի ենթակա անձի օրենքի ուժով քաղաքացի հանդիսանալու հանգամանքը.
- ՀՀ արդարադատության նախարարության գրությունների հիման վրա հարուցել ՀՀ տարածքում ազատազրկման ձևով դատապարտված օտարերկրացիների արտաքսման վարույթ և կայացնել համապատասխան որոշում
- վարույթի ընթացքում անձի կողմից ներկայացված փաստաթղթերի, վարույթի արդյունքում ձեռք բերված տեղեկությունների և այլ փաստաթղթերի հիման վրա ստուգել և պարզել անձին վարչական պատասխանատվության, արտաքսման, ռեադմիսիայի կամ կամավոր վերադարձի ենթարկելու վերաբերյալ որոշման կայացումը բացառող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, բացառող հանգամանքների բացակայության դեպքում վարույթի ընթացքում կայացնել վարչական պատասխանատվության ենթարկելու, արտաքսման վարույթ հարուցելու վերաբերյալ որոշումներ, ռեադմիսիայի կամ կամավոր վերադարձի դեպքում՝ եզրակացություններ.
- արտաքսման վարույթի հետագա ընթացքը լուծելու համար որոշումները համապատասխան գրությամբ ուղարկել ՀՀ ՆԳՆ իրավասու ստորաբաժանումներին
- ուսումնասիրել օտարերկացիների միասնական Հարթակի միջոցով կացության կարգավիճակի տրամադրումը մերժված, կացության կարգավիճակն ուժը կորցրած ճանաչված, կացության կարգավիճակ տրամադրելու վարույթը կարճված գործերով օտարերկրացիների ՀՀ տարածքում հետագա օրինական գտնվելու հանգամանքը, անօրինական գտնվող օտարերկրացիների հայտնաբերման դեպքում նյութերը հարուցել արտաքսման վարույթ.
- վարույթների շրջանակներում առերևույթ քրեական արարքի հատկանիշներ բացահայտելու դեպքում նյութերը փոխանցել քրեական վարույթ իրականացնող համապատասխան ստորաբաժանումներին, հարցումների շրջանակում անձի հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը բացահայտելու դեպքում հետախուզման փաստի վերաբերյալ զեկուցել Բաժնի պետին:

---

**3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

**3.1 Կրթություն, որակավորման աստիճանը**

**Ուղղություն:** ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ
**Ոլորտ:** ԻՐԱՎՈՒՆՔ
**Ենթաոլորտ:** Իրավունք
**Մասնագիտություն:** 042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

**3.2 Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

**3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ փաստաթղթավարության բնագավառում, կամ իրավունքի բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:

**3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ծառայությունների մատուցում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

**4 Կազմակերպական շրջանակ**

**4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

**4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման շրջանակներում:

**4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

**4.4 Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

**4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: